ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1949, № 5 Общественные науки

# ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պետական Պատմական թանգարանը կազմակերպել է հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի պատմությանը նվիրված հատուկ բաժին, որին հատկացված են Պատմական թանգարանի ընդարձակ ցուցասրահներից մի քանիսը։

Առաջին բաժնում ցուցադրված նյութերը պատկերում են հայ ժողովրդի վիճակը համաշխարհային իմպերիալիստական առաջին պատերազմի տարիներին։ Լուսանկարներով և փաստաթղթերով ցույց են տրված թուրքական կառավարության կողմից Արևմտյան Հայաստանում կազմակերպված մասսայական կոտորածները։

Կոտորածի կազմակերպումը իրենց վրա էին վերցրել թուրքական կառավարության ներքին գործոց մինիստր Թալեաթ փաշան, ռազմական մինիստր Էնվեր փաշան և ռազմածովային մինիստր Ջեմալ փաշան։ Նրանք իրենց շարքաբարությամբ գերազանցեցին արյունարբու Սուլթան Աբդուլ Համիդին։ Այստեղ ցուցադրված է արյունռուշտ Թալեաթ փաշայի 1915 թվի սեպտեմբերի 5-ին Հալեպի կուսակալ Մուստաֆա Աբդուլ-Հալիք Բեյին ուղղված հեռագիրը, որտեղ հրամայվում է ոչնչացնել ամբողջ հայությանը, չխնայելով անգամ օրորոցի մանուկներին։ Թե ինչպիսի ահռելի չափերի էին հասել կոտորածները, թանգարանի այցելուն այդ մասին կարող է գաղափար կազմել մի մեծադիր քարտեզից, որտեղ պայմանական նշաններով ցույց են տված այն քաղաքները և հարյուրավոր բնակավայրերը, որտեղ թուրք բանդիտները սրի են քաշել տասնյակ հազարավոր անզեն ու խաղաղ հայ բնակիչներին։

Բազմաթիվ լուսանկարներ ցույց են տալիս, թե հայկական կոտորածները ինչպիսի հրեշավոր անգթությամբ են կատարվել։ Թուրք ջարդարարները ծովերն ու գետերն են նետել, կենդանի-կենդանի հողի մեջ թաղել են հազարավոր երեխաների, սրախողխող են արել հղի կանանց, վառել, աճուրդի հանել, բռնաբարել աղջիկներին։ Անզեն բնակչությանը այրել են եկեղեցիներում, խարույկների վրա, կտրել նրանց ականջները, քթերը, հանել աչքերը և այլն։

Մասսայական կոտորածների և տեղահանումների միջոցով ամայացել են արևմտյան Հայաստանի բազմաթիվ քաղաքներն ու գյուղերը։ 1915—18 թվականներին սրի քաշվեց մոտ մեկ միլիոն հայ բնակչություն։

Փաստաթղթերով ցույց են տրված, որ հայ ժողովրդի ոչնչացման այդ զարհուրելի ծրագիրը թուրքական կառավարությունը կենսագործում էր կայզերական Գերմանիայի թելադրանքով և անգլո-ամերիկյան ու ֆրանսիական գիշատիչ իմպերիալիզմի թույլտվության պայմաններում։ Եվրոպական իմպերիալիզմի այդ ոճրագործ մտահղացումը, որն իրագործեց թուրքական կառավարությունը, նպատակ ուներ վերջ դնել թուրքական տիրապետության դեմ ուղղված ազգային-ազատագրական պայքարին և հրապարակից հանել հայկական հարցը։

Առաջին բաժնում բազմաթիվ փաստաթղթերով պատկերացված է Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիան որպես հայ ժողովրդի փրկության միակ ուղի։

Հայաստանի աշխատավորությունը ջերմորեն ողջունում է սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակը։ Քաղաքներում, գյուղերում, ռազմաճակատում տեղի են ունենում բազմաթիվ խանդավառ ցույցեր ու միտինգներ։

Որպես պատմական դոկումենտ ցուցադրված է 1917 թ. նոյեմբերի 8-ին Սարիղամիշում կայացած 30 հազար զինվորների միտինգի բանաձևը, որտեղ ասված է. «Մենք Սարիղամիշի կայազորի զինվորներս, ջերմորեն ողջունում ենք Ռուսաստանի Ժողովրդական Կոմիսարների Սովետին, և մեզ հայտարարում ենք սովետական ռևոլյուցիոն բանակ։ Պատրաստ ենք ոտքի ելնելու բանվորագյուղացիական կառավարության առաջին իսկ կոչով։

...տպանելու նրան և ռուսական մեծ ռևոլյուցիան։

Ցուցադրված փաստաթղթերի մեջ է 1917 թվի նոյեմբերի 30-ին Ալեքսանդրապոլում բոլշևիկների ղեկավարությամբ կազմակերպված բանվորների ու զինվորների միացյալ միտինգի բանաձևը։ Ալեքսանդրապոլի (Լենինականի) աշխատավորությունը ողջունում է նորաստեղծ Սովետական Ռուսաստանի կառավարության դեկրետները, օրենքները և պահանջում է Կովկասում ևս կազմակերպել սովետական իշխանություն։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան վճռական դեր խաղաց հայ ժողովրդի ազգային ազատագրության գործում։

Ռուսաստանի նորաստեղծ Սովետական կառավարությունը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հանճարեղ առաջնորդներ Լենինը և Ստալինը անձամբ զբաղվում էին հայ ժողովրդի ազատագրման հարցով։

Հոկտեմբերյան ռևոլյուցիան պատկերող բաժնում ցուցադրված են՝ սովետական կառավարության 1917 թվի դեկտեմբերի 31-ի հայտնի դեկրետը «Թուրքահայաստանի մասին»՝ Լենինի և Ստալինի ստորագրությամբ, և ընկեր Ստալինի հոդվածը՝ «Թուրքահայաստանի մասին»։

Դեկրետում ասված է. «Ժողովրդական Կոմիսարների Սովետը հայտարարում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի օկուպացրած «Թուրքահայաստանի» հայերի՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն ազատորեն ինքնորոշվելու իրավունքը»։

Այս դեկրետը հայ ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ ստեղծում է ռեալ նախապայմաններ ժողովրդի ազատագրման տենչերն ու ձգտումներն իրականացնելու համար։ Այս պատմական դոկումենտը մի պերճախոս վկայություն է այն մասին, որ հայ ժողովրդի բախտը կապված էր Սովետական Ռուսաստանի հետ, որ միայն սովետական իշխանությունը կարող էր լուծել տասնյակ տարիների ընթացքում իմպերիալիստական պետությունների շահատակությունների առարկա դարձած հայկական հարցը։

Ինչպես հայտնի է՝ Ժողկոմսովետի դեկրետը Արևմտյան Հայաստանի մասին, չիրականացավ, մի կողմից գերմանա-թուրքական իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականության, մյուս կողմից Անդրկովկասի հակառևոլյուցիոն, հակասովետական իշխանությունների, առանձնապես դաշնակցական ավանտյուրիստների դավաճանական գործունեության հետևանքով։

Արխիվային բազմաթիվ փաստաթղթերով ու դոկումենտներով պատկերված է Հայաստանի դաշնակցականների տիրապետության տարիներին հայ ժողովրդի ոխերիմ թշնամիները՝ դաշնակցական կոնտրռևոլյուցիոներները, ժողովրդի շահերին ու կամքին միանգամայն հակառակ, անգլո-ամերիկյան իմպերիալիզմի աջակցությամբ Հայաստանն անջատեցին Սովետական Ռուսաստանից և 1918 թվի մայիսին Հայաստանում հաստատեցին իրենց արյունոտ ռեժիմը։

Ցուցափեղկերում դրված մի շարք դիագրամներից այցելուն պարզ գաղափար է կազմում դաշնակների տիրապետության օրոք Հայաստանի ժողովրդական տնտեսության կատաստրոֆիկ անկման, բնակչության թշվառ վիճակի, սովի, համաճարակ հիվանդությունների մասին։ Դոկումենտներով ցույց է տրված դաշնակցական կառավարության ներքին ու արտաքին կործանարար քաղաքականությունը։

Մի շարք արխիվային փաստաթղթեր ցույց են տալիս, որ դաշնակցականների արյունոտ տեռորը չկարողացավ արգելք հանդիսանալ հայ աշխատավորության ռևոլյուցիոն պայքարին։

Հատուկ բաժին է հատկացված 1920 թվի մայիսյան ապստամբությանը։ Քարտեզի վրա նշված են Հայաստանի այն քաղաքներն ու շրջանները, որտեղ բռնկված էր ապստամբությունը։ Ցուցադրված է Ռևկոմի 1920 թվի մայիսի 10-ի դեկլարացիան՝ Ալեքսանդրապոլը Սովետական կարգեր հաստատելու մասին։ Այդ բաժնում զետեղված են մայիսյան ապստամբության հերոսներ՝ Սեվոյանի, Ղարիբջանյանի, Մուսայելյանի, Սարուխանյանի, Ղուկասյանի և մյուսների պորտրետները։

Դաշնակցական բանդաները մայիսյան ապստամբությունը դաժանորեն ճնշեցին, գնդակահարեցին հարյուրավոր կոմունիստների, մայիսյան ապստամբության ակտիվ մասնակիցների։ Այս գործում դաշնակցական կառավարությանն աջակցում էին ոչ միայն սպիտակ գվարդիական գեներալները, այլև անգլո-ամերիկյան իմպերիալիստների «դիվանագիտական միսիաների» անդամները, որոնք բուն էին դրել Հայաստանում։

Դաշնակցական կառավարության սարքած արյունոտ տեռորի դեմ իրենց ձայնը բարձրացրին եղբայրական Ռուսաստանի, Վրաստանի և Ադրբեջանի աշխատավորները։ Ցուցադրված փաստաթղթերի մեջ պատմական խոշոր արժեք ունի սովետական կառավարության արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի և Վրաս-

տանի կոմբջիջների շրջոցը ուղղված դաշնակցական կառավարությանը՝ հայ աշխատավորության նկատմամբ ոճրագործ վերաբերմունք տալու առթիվ։ Սովետական Ռուսաստանի Արտաքին Գործերի Կոմիսարի նոտայում ասված է. (դաշնակցական) «կառավարությունը թույլ է տալիս ինքնադատ և գաղտնի գնդակահարել կոմունիստներին։ Սովետական կառավարությունը մեծ վրդովմունքով իմացավ այն կամայականությունների մասին, որ գործ են դրվում Հայաստանի կոմունիստական շարժման գործիչների նկատմամբ։ Սովետական կառավարությունը պնդում է, որ անմիջապես արձակվեն... բանտարկյալները և անհապաղ դադարեցվեն Հայաստանի կոմունիստական շարժման գործիչների ինքնադատները ու գնդակահարությունները»։

Մայիսյան հերոսական ապստամբության պարտությունը չվհատեցրեց ոչ Հայաստանի կոմունիստական պարտիային և ոչ էլ նրա գլխավորությամբ գործող բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն մասսաներին։ Լցված ապագա հաղթանակի հավատով, հարստացած մայիսյան ապստամբության փորձով, Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները Կովկասյան երկրային կոմիտեի և անձամբ Ս. Օրջոնիկիձեի, Կիրովի և ընկ. Ան. Միկոյանի ղեկավարությամբ շարունակում էին իրենց պայքարը դաշնակցական ավանտյուրիստների դեմ։ Հայ ժողովուրդը շարունակում էր կենաց ու մահվան կռիվ մղել դաշնակցականների դեմ, երբ 1920 թվի աշնանը արևելյան Հայաստան ներխուժեցին մահ ու ավերածություն տարածող քեմալական թուրքերը։

Հատուկ բաժնում ցույց են տրված թուրք օկուպանտների վայրագությունները Հայաստանում։ Նրանք գրավեցին Կարինը, Սարիղամիշը, Արդահանը, Կարսը, Ալեքսանդրոպոլը և այլ վայրեր։

Այս բաժնում ցուցադրված է Ալեքսանդրոպոլի հեղկոմի դիմումն ուղղված ՌՍՖՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդին։ Դա մի վկայաթուղթ է Ալեքսանդրոպոլում և նրա գավառի գյուղերում քեմալականների կատարած աննկարագրելի ոճրագործությունների մասին։

Դիմումի մեջ ասված է.

«... Տաճկական օկուպանտների կողմից հավաքված և ուղարկված են Կարին մինչև հունվարի 1-ը (1920) Ալեք-պոլի գավառից և քաղաքից 15 հազար բանվոր և գյուղացի, ի թիվս որոնց և բազմաթիվ կոմունիստներ։ Անհայտ կորել են և սպանվել 5000 մարդ... Ալեք-պոլի գավառի գյուղացիների ողջ ինչքը տարված է։ Դրեթե ողջ գավառում սերմացուի համար հատիկ չի մնացել։ Քշված է 300.000 գլուխ մանր ու խոշոր անասուն։ Հանված են և տարված Կարս ու Տաճկաստանի խորքերը դեպոյի (Ալեքսանդրոպոլի) մեքենաները, երկաթուղային գույքը, տպարանական և այլ մեքենաներ»։



Բազմաթիվ լուսանկարներ, պլակատներ ու դոկումենտներ ցույց են տալիս Հայաստանի բնակչության ծանր, մղձավանջային կյանքը այդ օրերին։ Մեկ կողմից թուրքական օկուպանտների վայրագությունները, մյուս կողմից դաշնակցականների տեռորիստական ռեժիմը, հայ ժողովրդին հասցրել էին կործանման եզրին։

Հարկավոր էր անհապաղ օգնություն հասնել գլխովին բնաջնջման ենթակա Հայաստանի աշխատավորությանը։

Հատուկ բաժին է հատկացված Սովետական կարգերի հաստատմանը Հայաստանում։ Այս բաժնի բազմաթիվ փաստաթղթերի մեջ աչքի է ընկնում Ադրբեջանի Կոմկուսի 1920 թ. նոյեմբերի 5-ի դիմումը ուղղված Ադրբեջանի կոմ. պարտիայի բոլոր անդամներին, Բաքվի պրոլետարիատին և Ադրբեջանի աշխատավորներին՝ ռևոլյուցիայի մեծ առաջնորդ ընկեր Ստալինի Բաքու գալու առթիվ։ Ընկեր Ստալինը հանգամանորեն ծանոթանալով Հայաստանում ստեղծված դրության հետ, կտրուկ խնդիր է դնում ինչ գնով էլ լինի փրկել Հայաստանը, շուտով փրկել Հայաստանը։

Դաշնակցականների գործադրած ճիգերը՝ հետ պահելու Հայաստանի աշխատավորությանը ռևոլյուցիոն ճանապարհից, ձախողվում է։

Ընկեր Ստալինը Անդրկովկասի և Հայաստանի բոլշևիկներին կոչ է անում ոտքի հանել բանվորներին և աշխատավոր գյուղացիներին, գլխավորել նրանց ռևոլյուցիոն պայքարը սովետական կարգեր հաստատելու համար և փրկել Հայաստանի աշխատավորությանը։

Մի շարք փաստաթղթերի միջոցով այցելուն ծանոթանում է Հայաստանում ծայր առած ռևոլյուցիոն շարժման հետ, որի օջախն էր դարձել Քարվանսարան (Իջևան)։

1920 թվի նոյեմբերի վերջերին Իջևանը, Դիլիջանը, Շամշադինը փաստորեն գտնվում էին ապստամբ բանվորների և գյուղացիների ձեռքին։ Նրանք օգնություն էին խնդրում սովետական Ռուսաստանից։ Ընկեր Ստալինը ցուցում է տալիս 11-րդ բանակի զորամասերին՝ օգնել դաշնակների տիրապետության դեմ ռևոլյուցիոն դրոշակ պարզած Հայաստանի աշխատավորությանը։

1920 թվի նոյեմբերի 29-ին Հայաստանի ռևոլյուցիոն ուժերը Կարմիր Բանակի զորամասերի օգնությամբ գրավում են Քարվանսարան։

Այստեղ կազմվում է Ռևկոմ, որը 1920 թվի նոյեմբերի 29-ին Հայաստանը հայտարարում է Սովետական։

Մի մեծ կտավի վրա յուղաներկ նկարով ցույց է տրված սովետական բանակի մուտքը Երևան՝ 1920 թվի դեկտեմբերի 2-ին։

Պատմական փաստաթղթերի մեջ աչքի են ընկնում Լենինի և ընկեր Ստալինի ողջույնները՝ Հայաստանում սովետական կարգեր հաստատելու մասին։

Ընկեր Ստալինը՝ ողջունելով Հայաստանում սովետական կարգերի հաստատումը, գրում է.

«... Միայն Սովետական Իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն։

Կեցցե Սովետական Հայաստանը»։

Հաջորդ բաժինը պատկերում է Սովետական Հայաստանը վերականգնման շրջանում։ Բազմաթիվ դոկումենտների միջոցով այցելուն համոզվում է, որ սովետական կարգերը սոցիալական, քաղաքական ու տնտեսական լիակատար ազատություն տվին Հայաստանի աշխատավորությանը։

Դիագրամներով ցույց է տրված ռուս մեծ ժողովրդի և եղբայրական ռեսպուբլիկաների նյութական օգնությունը Սովետական Հայաստանին։ Փաստաթղթերի մեջ է Ա. Մռավյանի հիշողությունները Հայաստանի համար օգնություն ստանալու խնդրով Լենինի մոտ կատարած իր այցելության մասին։ Ա. Մռավյանը գրում է. «... Պատգամավորներն ասում են Վլադիմիրին, որ Հայաստանը խորհրդային է, բայց նա շատ ծանր պայմաններում է։ Պարեն չկա, Թուրք զորքերը հանրապետության մի կարևոր մասը՝ Ալեքսանդրապոլը գրաված ունեն. երկաթուղին նույնպես նրանց ձեռքին է...

«Մենք ամեն կերպ կօգնենք հայ ընկերներին,— պատասխանում է Լենինը,— այդ ինքնըստինքյան հասկանալի է... Հայաստանի և Թուրքիայի միջև եղած վեճերի խնդիրները կլուծենք... Թուրքիայի հետ բանակցությունները կսկսենք ու երկաթուղին կազատենք։ Մենք ինքներս դժվարին դրության ենք, բայց խորհրդային Հայաստանին կօգնենք ամեն կերպ... Իլիչը երկրորդ անգամ սեղմեց մեր ձեռքը, դուրս գնացինք։ «Տեսակցության հետևյալ օրը,— շարունակում է Մռավյանը,— ֆինժողկոմատից ստացանք 2 միլիարդ խորհրդային թղթադրամով, որ ոսկու հաշվով հավասար էր մոտ 600 հազարի։ Պարենժողկոմատը խոստացավ հաց, մանուֆակտուրա, ուրիշ մթերքներ...

Ես դրամը վերցնելով հետս, դեկտեմբերի 15-ին մեկնեցի Երևան»։[1]

Չնայած ինքը՝ Ռուսաստանը գտնվում էր տնտեսապես դժվարին վիճակում, այնուամենայնիվ նա օգնեց Հայաստանի աշխատավորությանը ոչ միայն դրամով, այլև մոտ երկու և կես միլիոն արշին մանուֆակտուրայով, սերմացուով, գյուղատնտեսական գործիքներով և այլն։

Ցուցադրված են Հայաստանի Ռևկոմի 1920—21 թվերի դեկրետները՝ հողի, խոշոր արդյունաբերության, բանկերի պետականացման մասին։ Հողի պետականացման մասին ընդունված դեկրետով, պետականացվեց արքունական, վանքապատկան, վակուֆային և մյուս հողերը։ Հողազուրկ գյուղացիությունը Սովետական կառավարությունից ստացավ 200 հազար հեկտար վարելահող, այդ օգնությունը խոշոր դեր խաղաց Հայաստանի աշխատավորության տնտեսական կյանքի բարելավման գործում։

Համառոտ կերպով պատկերված են քաղաքացիական կռիվները Հայաստանում՝ 1921 թվին։ Հայաստանի բուրժուա-կուլակային և մյուս բոլոր հակառևոլյուցիոն տարրերին դաշնակցական բանդիտները համախմբելով իրենց շուրջը, 1921 թվի փետրվարի 16-ին զինված ապստամբություն բարձրացրին Սովետական Հայաստանի իշխանության դեմ։ Իմպերիալիստական պետությունների և առաջին հերթին Թուրքիայի օգնությամբ դաշնակցական բանդաները սկզբում որոշ հաջողություններ ունեցան։ Նրանք գրավեցին Հայաստանի մի քանի շրջանները։ Փետրվարի 18-ին գրավեցին Երևանը և դաշնակցական Սիմոն Վրացյանի գլխավորությամբ կազմակերպեցին այսպես կոչված «Հայաստանի փրկության կոմիտե» կոնտրռևոլյուցիոն ձիրկը։ Սովետական Հայաստանի կառավարական օրգանները կարմիր զորամասերի հետ միասին անցան Արտաշատի և Վեդու շրջանները։ Սկսվեցին քաղաքացիական ուժեղ կռիվներ։ Դաշնակցական բանդաները հաճախակի հարձակումներ էին գործում սովետական զորամասերի վրա, նպատակ ունենալով ոչնչացնել նրանց։ Սովետական իշխանության զինված ուժերը դիմագրում էին հերոսաբար և հետ մղում թշնամուն։ Քաղաքացիական կռիվները ծավալ առան նաև Նոր-Բայազետի և Ելենովկայի շրջաններում։

Հայաստանի աշխատավորությունը նոր օգնություն ստանալով Սովետական Ռուսաս-

[1] Ա. Մռավյան, «Լենինի մոտ»— «Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի 1925 թ. № 272։

տանի 11-րդ բանակից, մարտ ամսի վերջերին ուժեղ գրոհներ սկսեցին դաշնակցականների դեմ և ապրիլի 2-ին Ախտայի կողմից մտան Երևան։ Դաշնակցական բանդաների մնացորդները փախուստի դիմելով՝ կենտրոնացան Զանգեզուրում։ 1921 թվի հուլիսի վերջին սովետական բանակի հարվածների տակ ջախջախվեցին նաև Զանգեզուրում ծվարած դաշնակականները։ Հայաստանն ամբողջովին մաքրվեց թշնամուց։

Այս բաժնում է ցուցադրված սովետական Ռուսաստանի ժողովուրդների եղբայրական օգնությունը Հայաստանի աշխատավորությանը՝ քաղաքացիական կռիվների ամբողջ շրջանում. օգնություն ոչ միայն զինված ուժով, զենքով, զինամթերքներով, պարենով, այլև վալյուտայով։

Դեռես քաղաքացիական կռիվների թեժ պահին՝ 1921 թվի մարտի 25-ին, Լենինի և ընկեր Ստալինի ցուցմունքով դժվարին պայմաններում սովետական ինքնաթիռը հերոսական թռիչք է կատարում Թիֆլիսից և նույն օրը իջնելով Արարատյան դաշտը՝ Արաքսի ափին կարմիր զորքերի համար բերում է 47 կիլոգրամ (5000 հատ) ոսկի։

Քաղաքացիական կռիվների հաղթական ավարտից հետո Հայաստանի աշխատավորությունը նոր եռանդով լծվում է խաղաղ շինարարական աշխատանքի։

Հաջորդ բաժինը նվիրված է բանվորների և գյուղացիների գործ դրած եռանդուն ջանքերին՝ ավերված Հայաստանի տնտեսության վերականգնման համար։

Ցուցադրված է Սովետական Հայաստանի առաջին էլեկտրիֆիկացիայի լուսանկարը, որն ընդունվել է 1922 թվին, Հայաստանի ՍՍՌ Սովետների անդրանիկ համագումարում, մի արժեքավոր փաստաթուղթ, որով հաստատվում է սովետական կարգերի լիակատար հաղթանակը, Հայաստանի սոցիալական, քաղաքական ու տնտեսական ազատությունը։ Հայաստանը հնարավորություն է ստանում ստեղծելու իր ազատ ու անկախ սովետական սոցիալիստական ռեսպուբլիկան։ Նա Սովետական Միության մեծ ընտանիքի հավասարազոր անդամն է։

Համառոտ կերպով ցույց է տրված Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծման պատմությունը։ Պատմական դոկումենտների շարքում է «Անդրերկրոմի բյուրոյի որոշումը՝ Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիա ստեղծելու մասին»։

Հայկական ՍՍՌ Մինիստրություններին, գերատեսչություններին հատկացված բաժիններում ցուցադրված են ռեսպուբլիկայի նվաճումները՝ սոցիալիստական ինդուստրիալիզացիայի տարիներին (1926—1929 թ. թ.), կոլեկտիվացման շրջանում (1929—34 թ. թ.), ապա ներկայացված է սովետական Հայաստանը՝ սոցիալիստական հասարակարգի կառուցման ավարտման և աստիճանաբար կոմունիզմին անցնելու շրջանում (1934—1941 թ. թ.)։

Բազմաթիվ թվեր, դիագրամներ, փաստաթղթեր, լուսանկարներ վկայում են Ստալինյան առաջին և երկրորդ հնգամյակների փայլուն նվաճումների և երրորդ հնգամյակի առաջին երկու տարվա հաղթանակի մասին, որով պայմանավորվում է աշխատավորության նյութական դրության բարելավումը, գրագիտության, կուլտուրայի և արվեստի աննախընթաց վերելքը։ Տրված է Հայաստանի բոլշևիկների անողոք և հետևողական պայքարը՝ կոնտրռևոլյուցիոն տրոցկիզմի և բուրժուա-նացիոնալիստական ցափթիֆուկների դեմ։

Լայն տեղ է հատկացված հայ ժողովրդի մասնակցությանը Հայրենական մեծ պատերազմին։ Ցուցադրված բոլոր դոկումենտների մեջ այցելուի ուշադրությունը գրավում է ընկեր Ստալինի 1941 թվի հուլիսի 3-ի պատմական ռադիո ելույթը։ Ընկեր Ստալինի կոչը՝ պաշտպանել Սովետական Սոցիալիստական հայրենիքը գերմանա-ֆաշիստական զավթիչներից, լայն արձագանք է գտնում Սովետական Հայաստանի աշխատավորության մեջ։

Ցուցադրված է Երևանի Կիրովի անվան գործարանի բազմահազարանոց կոլեկտիվի նամակը, որն ընդունվել է ընկեր Ի. Վ. Ստալինի 1941 թ. հուլիսի 3-ի ռադիոելույթի առթիվ։

Կիրովցիներն ընկեր Ստալինին ուղղած իրենց նամակում գրում են.

«Թանկագին ընկեր Ստալին.

Այսօր, երբ գերմանական արյունարբու ֆաշիզմը գողունի, ավազակային հարձակում է սկսել սոցիալիզմի մեր հայրենիքի սրբազան սահմանների վրա... մենք, Երևանի Կիրովի անվան գործարանի բոլոր աշխատողներս... սովետական ամբողջ ժողովրդի հետ միասին տոգորված ենք մի ցանկությամբ, որպեսզի ամեն կերպ և ամեն ինչով օգնենք մեր պանծալի Կարմիր Բանակին, ավելի ուժգին, ավելի արագ և ավելի կործանիչ հարված հասցնենք գերմանական ֆաշիստական ոհմակին...»։

Կիրովցիներն իրենց նամակի վերջում գրում են.

«...Մենք գիտենք, որ ահեղ օրեր է ապրում մեր հայրենիքը, մենք գիտենք, թե ինչի համար ենք մենք կռվում, մենք գիտենք, որ սովետական մեծ ժողովուրդը գերմանական ֆաշիզմի դեմ մղվող հայրենական պատերազմում կհաղթանակի և երկրի երեսից մեկ ընդմիշտ կջնջի գերմանական ֆաշիզմը, իմպերիա-

լիզմը։ Մենք կհաղթանակենք, որովհետև մեր գործն արդար է, որովհետև մեզ ղեկավարում և հաղթանակից հաղթանակ է տանում մեծ Ստալինը...»։

Հայրենական պատերազմի ահեղ օրերին Հայաստանի երկաթուղայինները կազմակերպում են աշխարհազորի ջոկատներ։ Այս առթիվ նրանց ընդունած բանաձևը նույնպես ցուցադրված է թանգարանում։

Ցուցադրված նյութերի մեջ է Հայրենական պատերազմի պատմության կարևոր վավերաթղթերից մեկը՝ հայ ժողովրդի նամակն ուղղված ռազմաճակատի հայ մարտիկներին։ Այդ նամակը ստորագրել են տասնյակ հազարավոր աշխատավորներ։ Նույն ցուցափեղկում դրված է հայկական զորամասերի մարտիկների և հրամանատարների պատասխանը։

Ուշագրավ դոկումենտներով ցուցադրված է պատերազմի հաղթական ավարտը։

Հայ ժողովուրդն անսահման խանդավառությամբ է ընդունում ՍՍՌՄ Ժողկոմսովետի Նախագահ, Գեներալիսիմուս մեծ Ստալինի ուղերձը ժողովրդին՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտման և խաղաղ զարգացման ժամանակաշրջանն սկսելու մասին։ Լուսանկարների և այլ նյութերի միջոցով ցույց են տրված Հայաստանի բոլոր քաղաքներում, գյուղերում տեղի ունեցած խնդության միտինգներն ու ցույցերը։ Երևանի փողոցներում, քաղաքային այգիներում մայրաքաղաքի աշխատավորները դրկախառնվում են, ողջունում միմյանց։ Նրանք բոլորն իրենց շնորհակալության առաջին խոսքն ուղղում են մեր հաղթանակների մեծ կազմակերպիչ, Գերագույն Գլխավոր Հրամանատար, Սովետական Միության Գեներալիսիմուս մեծ Ստալինին։

Ցուցասրահներից մեկի մի ամբողջ պատը զարդարված է հայ ժողովրդի քաջարի զավակների՝ Սովետական Միության տասնյակ հայ ռազմիկ հերոսների մեծադիր պորտրետներով։ Հայրենական պատերազմին հատկացված բաժնի կենտրոնում դրված է մեր դարաշրջանի ամենահանճարեղ ռազմագետ ընկեր Ստալինի յուղաներկ պորտրետը։ Նկարի տակ ոսկեզօծ տառերով գրված է.

«Մեր գործն արդար է, մենք հաղթեցինք»։

Հայ ժողովուրդը հպարտանում է, որ Հայրենական պատերազմի տարիներին ավելի քան 50.000 հայ մարտիկներ և թիկունքի աշխատավորներ պարգևատրվել են Սովետական կառավարության շքանշաններով և մեդալներով, ավելի քան 100 հայ ռազմիկներ արժանացել են Սովետական Միության Հերոսի բարձր կոչման, իսկ Ստալինյան գեներալիտետի շարքերում գտնվում են 50-ից ավելի հայ գեներալներ։

Թանգարանում մի քանի վահանների վրա ներկայացված է հայրենադարձությունը։ Ցուցադրված է սովետական կառավարության որոշումը՝ արտասահմանի տարագիր հայության վերադարձն արտոնելու մասին։ Այդ որոշումը ցնծությամբ է ընդունվել ինչպես արտասահմանի հայ աշխատավորության, այնպես էլ սովետական Հայաստանի աշխատավորության կողմից։ Ցուցադրվում են հայրենադարձների համար կառուցված և կառուցվող մի քանի ավանների, գյուղերի ռելեֆ մակետները։

Առանձին լուսանկարներով և դիագրամներով ցույց են տրված սովետական նոր քաղաքացիների աշխատանքային սխրագործությունները արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության, արվեստի և այլ բնագավառներում, մեր կառավարության կողմից բաց թողնվող և տասնյակ միլիոնների հասնող երկարատև վարկը հայրենադարձների բնակարանային շինարարության ու կենցաղային կարիքների համար։

Թանգարանի սովետական բաժնում հատուկ տեղ է գրավում Հայաստանի նորագույն ճարտարապետությունը։ Այցելուն հիացմունքով է դիտում տաղանդավոր ճարտարապետ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի նախագծով կառուցված կառավարական տան, օպերայի և բալետի պետական թատրոնի և բազմաթիվ այլ նորակառույցների մեծադիր լուսանկարները։

Սովետական իշխանության տարիներին կառուցվել են մի շարք քաղաքներ, բազմաթիվ գյուղեր ու ավաններ, որոնց մեջ աչքի են ընկնում՝ Նոր Սեբաստիա, Արաբկիր, Կիրզա, Քաջարան ավանները։ Դրանց հատկացված բաժնում ցուցադրված են արդեն կառուցված կամ կառուցվելիք հոյակապ պալատների մակետները, որոնց մեջ ուրույն տեղ է գրավում երիտասարդ, շնորհալի ճարտարապետ Ռաֆիկ Իսրայելյանի նախագծով կառուցվելիք ռազմական Թանգարանի շենքի մակետը ընկեր Ստալինի մոնումենտ արձանով։

Բազմաթիվ դիագրամներ, փաստաթղթեր և լուսանկարներ ցույց են տալիս մեր ռեսպուբլիկայի նվաճումները առողջապահության և լուսավորության բնագավառում։ Ցուցադրված են ուշագրավ դիագրամներ։ 1913 թվին Երևանի նահանգում մի քաղաքացու վրա առողջության նպատակով տարեկան ծախսվել է 26 կոպեկ, իսկ ժանդարմերիայի վրա՝ 5 ռուբլի 85 կոպեկ։ Ի մեծ հակադրություն դրան, 1948 թվին Հայկական ՍՍՌ Առողջապահության Մինիստրության բյուջեն կազմում էր 160 միլիոն ռուբլի, կամ մեկ շնչի առողջապահության

պահպանման վրա ծախսվել է ավելի քան 11 ռուբլի։

Որ մեր ռեսպուբլիկան դարձել է համատարած գրագիտության երկիր, այդ վկայում է Լուսավորության Մինիստրության դպրոցական ցանցի ռելեֆ քարտեզը։ Հայաստանի քարտեզի վրա չկա այնպիսի մի բնակավայր, որտեղ չլինեն տարրական, ոչ լրիվ միջնակարգ դպրոցներ։ 1948 թվի պետական բյուջեով ժողովրդական կրթության վրա ծախսված է մոտ 390 միլիոն ռուբլի։

Դեղարվեստական բարձր ճաշակով է ցուցադրված Գիտությունների Ակադեմիային հատկացված բաժինը։ Դիագրամ-սխեմայով տրված է Ակադեմիայի 13 տարվա անցած ուղին։

1935 թվին կազմակերպվել է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալը— Արմֆանը, իսկ 1943 թվի նոյեմբերի 29-ին ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշմամբ նախկին ֆիլիալի բազայի վրա ստեղծվել է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան, որն ունի 30-ից ավելի գիտա-հետազոտական ինստիտուտներ, լաբորատորիաներ, ինքնուրույն սեկտորներ և այլ գիտական հաստատություններ։

Գիտությանը նվիրված բաժնում ցուցադրված են նաև ռեսպուբլիկայի տաղանդավոր գիտնականների լուսանկար-պորտրետները։

Ցուցադրված են արվեստի, գրականության, կուլտ-լուս հիմնարկների, սոցիալական ապահովության, աշխատանքային ռեզերվների, առևտրի ցանցի, օրառողջման և այլ բնագավառներում սովետական իշխանության տարիներին ձեռք բերված փայլուն նվաճումները։

Մի առանձին ցուցասրահ է հատկացված Հայկական ՍՍՌ գյուղատնտեսությանը։ Տասնյակ դիագրամներով, փաստաթղթերով, լուսանկարներով պատկերացված են սոցիալիստական գյուղի նվաճումները 28 տարվա ընթացքում։

Գյուղատնտեսական բաժինը զարդարված է բարձր բերքի վարպետների, անասնապահության ֆրոնտի ականավոր աշխատողների, սոցիալիստական աշխատանքի հերոսների նկարներով։

Գյուղատնտեսական բաժնին հաջորդում է սննդհամի, թեթև արդյունաբերության, արհեստագործական կոոպերացիայի և անտառային տնտեսության բնագավառներին հատկացված բաժինները։ Ցուցադրված են ապրանքների հարյուրավոր տեսակներ, ռեսպուբլիկայի միայն տեքստիլ արդյունաբերության կոմբինատները և գործարանները արտադրում են ավելի քան 40 տեսակ նոր մետաքսե, բրդյա, բամբակի բարձրորակ կտորեղեն։

Հաջորդ սրահում ցուցադրված են Կաբելի գործարանի, Գյինձ տրեստի, Հայէներգոյի, ռէզինի արդյունաբերության, Շինանյութերի, Տեղական արդյունաբերության մինիստրությունների տասնյակ գործարաններում արտադրվող ապրանքների շատ և շատ նմուշներ՝ էլեկտրոսարքավորումներ, գեներատորներ և տրանսֆորմատորներ, Ձերժինսկու անվան գործարանի՝ բարդ կառուցվածքի դազգահներ, կոմպրեսորներ, հիդրոտուրբիններ և այլն։ Յուրաքանչյուր սովետական քաղաքացի Պատմության Թանգարան այցելելիս մի անգամ ևս համոզվում է, որ Հայկական ՍՍՌ-ն իրոք դարձել է ինդուստրիալ ագրարային երկիր։ Այդ ձեռք է բերվել Լենին—Ստալինի փառապանծ պարտիայի ճիշտ քաղաքականության շնորհիվ, հայ ժողովրդի մեծ բարեկամ սիրելի հայր Ստալինի ամենօրյա անդուլ հոգատարության։

Վ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ